

Իրավագիտություն

Ռաֆիկ Պետրոսյան

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ վաստակավոր իրավաբան

Գարեգին Պետրոսյան

ՀՀ ԱԺ աշխարակազմի իրավաբանական վարչության պետ,
ՀՀ պետական ծառայության առաջին դասի խորհրդական, ի.գ.թ.

ՀԱՄԱՆՄԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ իրավունքի այն ճյուղերին, որոնցում օրենսդիրը թույլատրում է կիրառել օրենքի և/կամ իրավունքի համանմանություն (անալոգիա): ՀՀ օրենսդրության և դատական պրակտիկայի, օտարերկրյա իրավունքի մի շարք ճյուղերում անալոգիայի ինստիտուտի կիրառման համեմատական վերլուծության հիման վրա մշակվել են ինստիտուտը կատարելագործելու, ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարություններում նույնպես այն ներդնելու առաջարկներ և կոնկրետ դրույթներ:

Հիմնաբառեր. Համանմանություն (անալոգիա), կանոնագիրք, օրենքի անալոգիա, իրավունքի անալոգիա, գույքային իրավունքներ, ձեռնարկատիրական գործունեություն, իրավակիրառ մարմիններ, սահմանադրական դատարան:

Իրավունքի բացերի և դրանք հաղթահարելու հետազոտությունը, ինչպես նաև համանմանության իրավաբանական էությունն ու դրա երկու տեսակների՝ օրենքի և իրավունքի անալոգիաների զանազանումը, անշուտ, առավել լրիվ և հստակ կարող է իրականացվել իրավունքի տարբեր ճյուղերում (ոլորտներում), մասնավորապես՝ քաղաքացիական, ընտանեկան,

աշխատանքային, հողային և նյութական իրավունքի այլ ճյուղերում, քաղաքացիական և քրեական դատավարության իրավունքներում առկա բացերի և դրանց հաղթահարման հնարավորությունների ու սահմանների բացահայտումից հետո: Եվ անկախ նրանից, թե տարբեր հեղինակներ ինչ հատկանիշներ են վերագրում համանմանության ինստիտուտին կամ իրավական համակարգում որտեղ են տեսնում այն, այդ իրավական երևույթի էությունն առավել ճշգրիտ բացահայտվում է իրավունքի (օրենսդրության) տարբեր ճյուղերում դրա նորմատիվ ամրապնդման և իրավական բացերի լրացման եղանակների հետազոտման միջոցով: Իսկ նշված խնդրի օրենսդրական լուծման վրա կարող է լույս սփռել հենց համանմանության կիրառման պատմությունն ինքը:

Հայաստանի Հանրապետության նախկին և ներկա իրավական համակարգերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզման, որ սովորաբար օրենսդիրն է որոշում թույլատրել կամ չթույլատրել իրավակիրառ մարմիններին կիրառելու համանմանություն իրավունքի այս կամ այն ճյուղում, այսինքն՝ իրավահարաբերությունների դր խմբի կարգավորման բնագավառում է նա թույլատրում իրավակիրառ մարմիններին բարձրանալու իր (օրենսդրի) մակարդակին և պաշտպանելու համանմանությամբ կայացված իրենց որոշումներն ընդդիմախոսների առջև: ՀՀ օրինակարգված ակտերում այդ հարցը լուծված է երկու տարբերակներով՝ ա) թույլատրել համանմանության կիրառում բ) չթույլատրել համանմանության կիրառում:

Դատավարագետ Դ. Թումանովն իրավացիորեն այդ հանգամանքը պայմանավորում է երկու երևույթների առկայությամբ՝ առաջինին վերագրելով կարգավորման առարկայի, հետևաբար և դրա նորմերի ծավալային լայնությունն ու ձկունությունը, իսկ երկրորդին՝ կարգավորման առարկայի հաճախակի փոփոխելիությունը: Այդ կապակցությամբ նա գրում է. «Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առանց իրավական համանմանության ինստիտուտի հնարավոր չէ յուրազնայ, քանի որ մի այլ բանը կարող է բերել իրավական փակուղու: Օրենսդրության փոփոխության արագությունը և նոր հարաբերությունների ներգրավումն այնքան մեծ չեն, որքան իրենց՝ հարաբերությունների փոփոխության արագությունը»¹:

Քննարկվող ինստիտուտի զարգացման պատմությունը նաև վկայում է, որ ավանդույթի ուժով համանմանության կիրառումը և նախկինում, և այսօր առավել թույլատրելի է համարվել (համարվում) մասնավոր (բառիս լայն իմաստով՝ քաղաքացիական) իրավահարաբերությունների, քան հանրային իրավունքի բնագավառում: Սակայն պատմականորեն այդպիսի փոխհարաբերություն գոյություն է ունեցել ոչ միշտ: Այսպես՝ Ցարական Ռուսաստանի 1864թ. Քրեական դատավարության կանոնագիրքը (հոդվ.12), և Քաղաքացիական դատավարության կանոնագիրքը (հոդվ. 9) որոնք նախատեսում էին նյութական (քրեական կամ քաղաքացիական) օրենսդրության բնագավառում համանմանության կիրառում և մինչև 1920-ականների

1 Տե՛ս Դ. Ա. Туманов Пробелы в гражданском процессуальном праве. Изд-во НОРМА, М., 2008, 46-47 էջերը:

վերջերը կիրառվում էին նաև Արևելյան Հայաստանում, նախատեսում էին օրենքի անպարզության կամ ոչ լրիվության դեպքերում «ազատ մեկնաբանման» հնարավորություն՝ դրա տակ հասկանալով դատավձիռները և վձիռները «օրենքների ազատ մեկնաբանման», կամ որ նույնն է՝ համանմանության վրա հիմնվելու իրավունքը¹: Ըստ որում, համանմանության կիրառմամբ քրեական գործերի լուծումն անուղղակիորեն թույլատրված էր նաև Խորհրդային Հայաստանի քրեական օրենսդրությամբ մինչև 1961թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի ուժի մեջ մտնելը:

Ցարական Ռուսաստանի քրեական և քաղաքացիական դատավարությունների կանոնագրքերը որոշ վերապահումներով Խորհրդային Հայաստանում փաստորեն գործեցին նաև նրա գոյության առաջին երեք տարիների ընթացքում մինչև քաղաքացիական, քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերի ընդունումը²:

ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1923թ. փետրվարի 13-ի «Քաղաքացիական օրենսգրքի գործադրման մասին» որոշման³ 5-րդ կետը սահմանում էր. «ՀՍԽՀ քաղաքացիական օրենսգրքի տարածական մեկնաբանությունը (փաստորեն համանմանության կիրառումը՝ հեղ.) թույլատրելի է այն դեպքում միայն, երբ այդ պահանջում է բանվորագյուղացիական պետության և աշխատավոր մասսաների շահերի պաշտպանությունը»: Այդ նույն գաղափարը վերածնակերպվեց նաև 1923թ. հոկտեմբերի 1-ից գործողության մեջ դրված ՀՍԽՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածում և ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի առաջին բաժնի ընդհանուր դրույթներում: Ըստ որում, եթե քրեական դատավարության օրենսգրքը համանմանության ինստիտուտի կիրառումը կապում էր նոր ձևավորվող «հեղափոխական օրինականության ապահովման» հետ, որը հետագայում վերածվեց «սոցիալիստական օրինականության ապահովման» դոկտրինի, ապա քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածը համանմանությանը (դրա կիրառմանը) տալիս էր առավել հստակ ձևակերպում, այն է՝ «Որևէ գործ լուծելու համար օրենքներ ու կարգադրություններ չլինելու դեպքում դատարանը գործը վճռում է՝ ղեկավարվելով խորհրդային օրենսդրության ընդհանուր քաղաքականությամբ»:

Չանդրադառնալով հիշյալ օրենսգրքերում համանմանության կիրառման խիստ դասակարգային բնույթին⁴ նշենք միայն, որ դրանցով թույլատ-

1 Стен Шершеневич Г. Общая теория права. М., 1912, էջ747, Спектор Е. И. Пробелы в законодательстве и пути их преодоления. Автореф. дисс.... канд.шрид.наук, М., 2003, էջ 15:

2 ՀՍԽՀ քաղաքացիական դատավարության և ՀՍԽՀ քրեական դատավարության օրենսգրքերը տես ՀՍԽՀ Դեկրետների և Որոշումների Հավաքածու, 1923թ. N 7, հոդվածներ 60-ը և 61-ը:

3 Стен Հայկական ՍՍՌ օրենքների, Գերագույն սովետի նախարգահության հրամանագրերի և հայկական ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1920թ.-1938թ. դեկտեմբերի 31: Հայ.պետ.հրատ., Երևան, 1963, 146-147 էջերը: Այսուհետ՝ ՀՍԽՀ Դեկրետների և Որոշումների Հավաքածու:

4 Քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում համանմանության խիստ դասակարգային բնույթի մասին մանրամասն տես Գ.Ս. Ղազինյան, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան-2001, 67-80 էջերը, Պետրոսյան Ռ. Գ., Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում,

րելի էր միայն նյութական օրենսդրության համանմանության կիրառում դատարանների կողմից, որպիսի դրույթն ընդհանրապես հանվեց 1961թ. հունիսի 1-ից գործողության մեջ դրված Հայկական ՍՍՌ քրեական դատավարության օրենսգրքից, բայց պահպանվեց և առավել հստակ ձևակերպում ստացավ 1965թ. հունվարի 1-ից գործողության մեջ դրված ՀՍՍՌ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածում: Այստեղ նշված էր. «Վիճելի հարաբերությունը կարգավորող օրենք չլինելու դեպքում դատարանը կիրառում է միանման հարաբերությունները կարգավորող օրենքը, իսկ այդպիսի օրենք չլինելու դեպքում դատարանը ելնում է սովետական օրենսդրության սկզբունքներից և իմաստից»:

Պետք է ասել, որ քաղաքացիական իրավունքում համանմանությանը տրված ձևակերպումը մինչև 1965թ. Հայաստանում գործող օրենսդրության համեմատ երկու քայլով առաջ էր, որովհետև նախ՝ բացի օրենքի համանմանությունից թույլատրվում էր նաև իրավունքի համանմանության կիրառում և երկրորդ՝ համանմանության կիրառումը կապվում էր ոչ թե այսպես կոչված՝ «սովետական պետության ընդհանուր քաղաքականության», այլ օրենքի կամ օրենսդրության իմաստի ու սկզբունքների հետ:

Օրենքի ու իրավունքի համանմանության լիարժեք («դասական») կիրառումը հնարավոր դարձավ միայն ՀՀ տնտեսական և քաղաքական համակարգերի փոփոխման արդյունքում: 1999թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվեց. «1. Այն դեպքերում, երբ սույն օրենսգրքի 1-ին հոդվածում նախատեսված հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, և բացակայում է դրանց նկատմամբ գործարար շրջանառության սովորույթը, նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում է համանման հարաբերություններ կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա):

2. Օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից (իրավունքի անալոգիա)»:

Մասնավոր իրավահարաբերությունների մաս կազմող գույքային հարաբերություններն այնքան լայն են, որ անգամ հնարավոր չէ իրավունքի մեկ ճյուղում դրանք նախատեսել ու կարգավորել ամբողջությամբ: Ահա թե ինչու ՀՀ քաղ. օր. 1-ին հոդվածի 2-րդ մասը չի թվարկում (չի էլ կարող թվարկել՝ հեղ.) դրանք և նշում է, որ քաղաքացիական օրենսդրությունը կարգավորում է նաև «...այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ»:

Վերը նշված պատճառով այսօր գործող ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է բազմաթիվ իրավական բացեր, որոնցով և պայմանավորված է համանմանության լայն կիրառման հնարավորությունն այդ օրենսգրքի 9-րդ հոդվածում:

Այսպես՝ Քաղ. օր. հենց 2-րդ հոդվածում, որը տալիս է ձեռնարկատիրական գործունեության սահմանումը, բացակայում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց պետական գրանցման պարտադիրության մասին դրույթը, որը կարող է հարկեր վճարելուց խուսափելու և ընդհանրապես հարկային ու այլ մարմինների հսկողությունից դուրս գործելու հիմք հանդիսանալ: **Հետևաբար, անհրաժեշտ է նշված հոդվածը լրացնել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց պարտադիր պետական գրանցում ունենալու պահանջով:**

Բացի վերը նշվածից, գործնական կյանքում անհրաժեշտություն կա ապահովել նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց ազատության և այդ ազատության չարաշահման անթույլատրելիության միջև հավասարակշռություն, որը կարող է պահպանվել միայն այն դեպքում, երբ ձեռնարկատիրական գործունեության սահմանման մեջ նշվի որ այն իրականացվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Վերը նշվածները մեզ հիմք են տալիս առաջարկելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ բնորոշումը. **«Ձեռնարկատիրական է համարվում անձի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող և պետական գրանցում ունեցող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:**

Բերենք մասնավոր իրավահարաբերություններում իրավական բացի մեկ այլ օրինակ. ՀՀ քաղ.օր 1104 հոդվածը կարգավորում է մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքները, բայց այդ հոդվածի չորս մասերում էլ փաստորեն խոսվում է մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավատիրոջ գույքային իրավունքների մասին, այսինքն հոդվածի բովանդակությունից չի երևում, թե որն է բացառիկ իրավունքը, և ինչով է այն տարբերակվում նույն իրավատիրոջ գույքային իրավունքներից: Մինչդեռ եթե գույքային իրավունքները սեփականատիրոջ՝ իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներն են, որոնք նա կարող է զիջել նաև այլ անձանց, ապա իրավատիրոջ բացառիկ իրավունքը (հեղինակության իրավունք) որևէ մեկին անցնել չի կարող: «Օտարել»-ու իրավունքի մասին եզրույթը բազմաթիվ անձանց մոտ կարող է այն կեղծ մտայնությունն ստեղծել, որ մտավոր սեփականության օբյեկտի իրավատիրոջ հեղինակային իրավունքն էլ է իրենց օտարված: Մենք գտնում ենք, որ **օրենքում (ՀՀ քաղ.օր 1104 հոդվածում) պետք է ամրագրել «բացառիկ իրավունք» հասկացության բովանդակությունը՝ դրանից առանձնացնելով տիրապետման և օգտագործման իրավունքները:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ակնհայտ է նաև հետադարձ պահանջի (ռեգրեսի), իրավունքի՝ բարոյական վնասի հատուցման և բազմա-

1 Տե՛ս օրինակ՝ Журавлева Ю. В. Право регресса: Пробелы в законодательстве и возможные пути их преодоления. Бизнес в законе. 2007, N 4, 205-207 էջերը:

թիվ այլ ինստիտուտների ու հարաբերությունների կարգավորումը, որոնց թվարկումն անհնար է, և որոնք պրակտիկայում հաղթահարվում են ոչ միայն դատարանների, այլ նաև պետական մյուս մարմինների կողմից՝ ըստ դրանց իրավասության սահմանների:

Անդրադառնանք ՀՀ քաղաքացիական և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի՝ համանմանության կիրառման միջև եղած կապին ու առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ միաժամանակ գործողության մեջ դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում, որ նույնպես վերաբերում է նյութական (և ոչ թե դատավարական) օրենսդրության մեջ համանմանության կիրառմանը, դրան տրվեց հետևյալ ձևակերպումը. «Վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա)»:

Ակնհայտ է, որ վերը նշված օրենսգրքերի՝ նույն երևույթը (համանմանությունը) կարգավորող հոդվածների բովանդակությունները միանշանակ ընկալել հնարավոր չէ: Ինչպես իրավացիորեն նշում է Արթուր Վաղարշյանը, դատավարության օրենսգրքում ևս խոսքը գնում է նյութական օրենսդրության համանմանության մասին, որ արդեն սահմանված է քաղաքացիական օրենսգրքով, առաջինն ավելորդ է¹, որովհետև սխալմամբ ընկալվում է որպես դատավարության նորմի կիրառում անալոգիայով: Երկրորդ՝ եթե քաղաքացիական օրենսգրքում խոսք է գնում համանմանության հարաբերությունները «քաղաքացիական օրենսդրության նորմերով» լրացնելու հնարավորության մասին, ապա ըստ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրավական բացը կարող է լրացվել միմիայն օրենքով, այսինքն՝ այստեղ անտեսված է «և այլ իրավական ակտեր»-ի կիրառմամբ իրավական բացերը հաղթահարելու հնարավորությունը²:

Ընդունելով Ա. Վաղարշյանի երկրորդ դիտողության իրավացիությունը՝ գտնում ենք, որ դատավարության օրենսգրքում տեղ գտած համանմանության «ավելորդ»-ության մասին կարծիքի հետ դժվար է համաձայնվել, քանի որ, ըստ մեզ, քաղաքացիական դատավարությունում նյութական նորմերը կիրառող դատավորները պետք է հենց այդ օրենսգրքից իմանան թեկուզև նյութական, բայց նաև դատավարության օրենսդրության ճիշտ կիրառման համար կարևոր դատավարական նշանակություն ունեցող համանմանության ինստիտուտի մասին: Մասնավորապես որ 1918թ. ապրիլի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի առաջին մասում սահմանվել է, որ «դատավարական նորմերն օրենքի անալոգիայով չեն կիրառվում»: Ենթադրյալ շփոթը վերացնել-

1 Տե՛ս Արթուր Վաղարշյան, Պոզիտիվ իրավունքի բացերի լրացման իրավական կարգավորման հիմնային դիրքերը: ԼՂՀ դատական իշխանություն հանդես, 2011թ., թիվ 1, էջեր 9-10:

2 Տե՛ս նույն տեղում:

լու և համանմանության կիրառման սահմաններն ընդլայնելու նպատակով օրենսգրքի 4-րդ հոդվածում ավելացվել է նաև «նյութաիրավական օրենքի» կիրառման մասին, իսկ իրավունքի անալոգիային վերաբերող մասում՝ «իրավունքի ընդհանուր սկզբունքներից ելնելով» կապակցությունները: Ըստ որում, ճիշտ կլիներ իրար համապատասխանեցնել ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածների բովանդակությունները, այլև համանմանության կիրառում նախատեսող ՀՀ ընտանեկան օրենսգրքի 5-րդ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդվածները, որոշ առանձնահատկություններով հանդերձ, համապատասխանեցնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ձևակերպումներին:

Կցանկանայինք ընդգծել նաև, որ, ի տարբերություն ՀՀ քաղ.օր 9-րդ հոդվածի 2-րդ մասի, համանմանության ինստիտուտը կարգավորող ՌԴ քաղ.օր. 6-րդ հոդվածի 2-րդ մասը իրավունքի համանմանության կիրառում թույլատրում է՝ ելնելով ոչ միայն քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքներից, այլ նաև դրա «իմաստից», որն առավել ճշգրիտ է արտացոլում համանմանության էությունը: Բացի այդ, ՌԴ քաղ.օր-ը համանմանության ինստիտուտի կիրառման (ծագման) հիմք է համարում նաև «բարեխղճությունը, ողջամտությունը և արդարացիությունը»: Հետևությունն այն է, որ ՀՀ քաղ.օր-ը և ՀՀ քաղ. դատ. օր-ը լիարժեքորեն չեն բնորոշում իրավունքի համանմանության հատկանիշները:

Կարծում ենք, որ ՀՀ քաղ. օր. 9-րդ հոդվածի 2-րդ մասում ՌԴ օրինակով պետք է ավելացնել «և բարեխղճության, ողջամտության ու արդարացիության պահանջներից» բառերը, ընդհանուր իրավական սկզբունքները, որոնք դրականորեն կարող են ազդել համանմանության կիրառման հարցում միասնական դատական պրակտիկայի մշակման ու օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտեր կայացնելու վրա:

Այն հանգամանքը, որ իրավակիրառ մարմինները գործը լուծելիս պետք է ղեկավարվեն ոչ միայն իրավունքի ընդհանուր սկզբունքներով, այլ նաև բարեխղճության, ողջամտության ու արդարացիության պահանջներով, հաստատվում է դատական պրակտիկայից բերվող հետևյալ օրինակով. ՀՀ վարչական դատարանը 2015թ. հոկտեմբերի 29-ին քննել է հայցվոր Լևոն Շահվերդյանի դիմումն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության և նույն նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության՝ 2013թ. օգոստոսի 18-ին նշանակված կենսաթոշակում ՄԱԿ-ի Անձնակազմի միացյալ կենսաթոշակային հիմնադրամին կատարած կուտակային վճարումները ներառելու պահանջի մասին և վճռի պատճառաբանական մասում նշել է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի նախատեսում ՄԱԿ-ի Անձնակազմի միացյալ կենսաթոշակային հիմնադրամին կատարած վճարները կենսաթոշակում հաշվառելու կարգը: ՀՀ-ն ՍՍՀՄ իրավահաջորդը չէ, որպեսզի այդ հարցը լուծելիս հաշվի առնվի ՍՍՀՄ և ՄԱԿ-ի միջև 1980թ. հոկտեմբերի 10-ին

կնքված կենսաթոշակային իրավունքների փոխանցման մասին համաձայնագիրը ՄԱԿ-ում աշխատող և կուտակային վճարներ կատարած Խորհրդային Միության քաղաքացիների սոցիալական ապահովագրությանը վերաբերող դրույթները, որովհետև ՀՀ օրենսդրությունն այս հարցում իսպառ լծում է, սակայն Սահմանադրության 31-րդ (2005թ. տեքստով՝ հեղ.) և Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով պարտավոր է ապահովել մարդու և քաղաքացու իրավունքները և հիմնարար ազատությունները, այդ թվում՝ սեփականության իրավունքը և արդարացիության պահանջների պահպանմամբ վճռել է վերը նշված հիմնադրամում կատարված կուտակային վճարումները կենսաթոշակում ներառելու հայցվորի պահանջը¹: Այսպիսով, դատարանը բերված օրինակում կիրառել է իրավունքի ընդհանուր սկզբունքներից և արդարացիությունից բխող համանմանություն և լուծել է վեճը:

Այսպիսով, թե՛ նյութական և թե՛ դատավարության օրենսգրքերում սահմանված համանմանությունը վերաբերում է սուկ քաղաքացիական-նյութական օրենսդրության բնագավառին և փաստորեն արգելակում է դատավարության իրավունքում այն ներդնելուն: Պարզ է նաև, որ ՀՀ օրենսդրությունը մասնավոր կարգավորման հարաբերություններում թույլատրում է կիրառել նյութական օրենսդրության համանմանության երկու տեսակ՝ ա) օրենքի համանմանություն, որն ըստ Ա. Պիգոլկինի կոչվում է նաև «տարրական» համանմանություն² և բ) իրավունքի համանմանություն, որն իրավունքի բացերի լրացման այդ եղանակի հաջորդական փուլ է հանդիսանում օրենքի համանմանության կիրառման անհնարինությունից հետո: Առաջին դեպքում իրավակիրառ մարմինը որոշակի փաստական հարաբերությունների նկատմամբ կիրառում է նման հարաբերությունները կարգավորող կոնկրետ նորմեր, իսկ երկրորդ դեպքում նա ելնում է իրավունքի ընդհանուր սկզբունքներից՝ «մի շարք բարդ եզրահանգումների և նկատառումների միջոցով»³:

Համանմանության կիրառումը իրավական բացերի հաղթահարման («չեզոքացման») միջոց է, որը հնարավորություն է տալիս ապահովել հասարակական կյանքի նոր գործոնների հաշվառումը, օրենսդրության և/կամ դրա իմաստի դինամիզմը: Եվ, ինչպես դատավարագետ Ա. Տ. Բոններն է եզրակացնում, համապատասխան դեպքերում այն օրինականության և արդարության սկզբունքների իրացման միակ միջոցն է⁴, կամ ինչպես Կ. Կոմիսարովն է բնութագրում, այն հասարակական հարաբերությունների բնագավառում առկա բացերի լրացման եղանակ, գործող իրավական նորմերի և օրենսդրության ու իրավունքի հիմնական սկզբունքների տարածման ինստիտուտ է⁵:

1 Տե՛ս ՀՀ Վարչական դատարանի ՎԳ/6443/05/14 գործը, որով կայացված վճիռն անփոփոխ է թողնվել ՀՀ վերաքննիչ, իսկ ապա՝ Վճռաբեկ դատարանների կողմից:

2 Տե՛ս Пиголкин А. С., Обнаружение и преодоление пробелов права // Советское государство и право, 1970, N 3, էջ 86:

3 Տե՛ս Будзинский Е. С., Начала уголовного права. Варшава, 1870, էջ 38:

4 Տե՛ս Боннер А. Т. Источники советского гражданского процессуального права. М., ВЮЗИ, 1977, էջ 214:

5 Տե՛ս Комиссаров К. И., Задачи судебного надзора в сфере гражданского судопроизводства. Свердловск,

Այժմ անդրադառնանք ՀՀ քաղ. դատ. օր. 4-րդ հոդվածի առաջին մասում նշված «Դատավարական նորմերն օրենքի անալոգիայով չեն կիրառվում» դրույթին: Նախ և առաջ նման ձևակերպումից կարելի է մի պարզ հետևության հանգել այն մասին, որ դատավարական նորմերը օրենքի անալոգիայով չեն կարող կիրառվել, բայց իրավունքի անալոգիայով կարող են կիրառվել, որը, կարծում ենք, օրենսդրի մտադրության մեջ չի տեղավորվում: Երկրորդ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի համանմանությունը թույլատրվում է, երբ՝ ա) նույն օրենսգրքի 1-ին հոդվածում նախատեսված հարաբերությունները կարգավորված չեն օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, բ) բացակայում է դրանց նկատմամբ կիրառելի գործարար շրջանառության սովորույթը և գ) դա չի հակասում դրանց էությանը: Սա բխում է ոչ միայն իրավունքի այդ ճյուղի կարգավորման տնօրինչական (դիսպոզիտիվ) մեթոդի առանձնահատկությունից, այլ նաև այն իրավահարաբերությունների առատությունից, որոնք պայմանավորված են իրավական բացերի վերհանման (բացահայտման) անխուսափելիությամբ: Հարց է առաջանում. իսկ հնարավոր չէ, որ դատավարական իրավահարաբերությունները կարգավորող նորմերում ևս առկա լինեն իրավական բացեր: Չէ՞ որ իրավունքի այս ճյուղը ևս բավականաչափ ընդարձակ (լայնածավալ) է, որովհետև դրա նորմերով է կարգավորվում իրավունքի մասին վեճերի հետ կապված բոլոր գործերը (Քաղ. դատ. օր 18 հոդվ.), և դրանցով դատարանն իրականացնում է իրավունքի բոլոր սուբյեկտների (քաղաքացիներ, կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետություն, համայնքներ, օտարերկրյա քաղաքացիներ և իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա պետություններ, հանրային իրավական կազմավորումներ, միջազգային կազմակերպություններ և այլն) քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, հողային, հեղինակային, ժառանգական և բազմաթիվ ու բազմատեսակ այլ իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը¹ (Քաղ. դատ. օր. 2, 3, 428 հոդվածներ):

Դատավարության մեջ ընդհանրապես և քաղաքացիական դատավարության մեջ մասնավորապես համանմանության հնարավորության հարցը իրավաբան գիտնականների մոտ երկար ժամանակ եղել է վիճելի²: Այն ուղղակիորեն չի նախատեսվել ՌԴ քաղաքացիական դատավարության նախկին (1923, 1964թթ.) օրենսգրքերում, ուղղակիորեն սահմանվել է միայն 2001թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որի պատճառով էլ գրականության մեջ եղած վեճերն իսպառ դադարել են: Այն նախատեսված չի եղել ոչ միայն Հ.Ս.Խ.Հ 1923, ՀՍՍՌ 1965 և ՀՀ 1999 թվականների ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում, այլև ինչպես նշվեց

1971, էջ 30:

1 Մեզ համար միանգամայն անհասկանալի պատճառով ՀՀ քաղ. դատ. օր-ը քաղաքացիական դատավարության խնդիրները հստակ կերպով չի կարգավորել, ինչպես օրինակ դա արել է ՀՀ քր.դատ.օրը (հոդվ.2): Չէ՞ որ արդարադատության խնդիրները տարբեր դատարանների (քրեական, քաղաքացիական, վարչական) համար ունեն տարբեր առանձնահատկություններ:

2 Այդ մասին մանրամասն տես Д. А. Туманов, նշվ. աշխ. 45-85 էջերը, որտեղ հեղինակը բերում է դատավարական բացերի վերացմանն ուղղված բազմաթիվ դատական օրինակներ:

վերևում, նաև 2018թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Ավելին, վերջին օրենսգրքով դրա կիրառումը ուղղակիորեն արգելված է: Մինչդեռ հենց ՀՀ 1999թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի որոշ հոդվածների կիրառությունը ցույց տվեց, որ դրանում իսկապես առկա են որոշակի բացեր, որոնք մասամբ վերացվեցին միայն 2018թ. համանուն օրենսգրքում: Այսպես՝ 1999թ. օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ կետը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, այն է՝ քրեական պատասխանատվություն էր նախատեսում գործին մասնակցող անձանց սուտ բացատրության համար, իսկ նույն օրենսգրքի 45-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն էր նախատեսում փորձագետի կողմից ակնհայտ սուտ եզրակացություն տալու համար: 1999թ-ի օրենսգրքի այդ բացերը օրենսդիրը վերացրեց միայն նոր՝ 2018թ. ընդունված օրենսգրքի 32 և 45-րդ հոդվածներում: Իսկ դա ապացույց է այն բանի, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ևս կային իրավական բացեր, որոնց՝ դատավարության համանմանության կիրառմամբ վերացումը բացարձակապես չի հակասում դատավարությունում օրինականության հաստատմանը, արդարացի դատական ակտերի կայացմանը: ՌԴ քաղ. դատ. օր. մեկնաբաններն այս կապակցությամբ իրավացիորեն նշում են. «Օրենսդրության մեջ դժվար է, իսկ երբեմն էլ անհնարին նախատեսել կոնկրետ աշխատանքային գործի քննության և լուծման ընթացքում ծագող ընթացակարգային բոլոր իրարությունները: Դրա հետ կապված՝ դատական պրակտիկայում հաճախ հարկ է լինում օրենքի կամ իրավունքի համանմանությամբ հաղթահարել դատավարական գործունեության իրավական կարգավորման մեջ առկա բացերը և դրանց հետ կապված՝ դատավարության սուբյեկտների հարաբերությունները», և մատնացույց են անում դատական պրակտիկայից մի շարք օրինակներ դատավարական բացերի վերաբերյալ¹:

Իրավական բացեր, անշուշտ, գոյություն ունեն նաև ՀՀ գործող քաղ. դատ. օրենսգրքում: Այսպես, այդ օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը դատական ակտի պարտադիր բեկանման հիմք է համարում այն դեպքերը, երբ դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, իսկ 9-րդ կետը դատական ակտի պատճառաբանական մաս չունենալը: Մինչդեռ չի խոսվում այն մասին, թե ինչ է տեղի ունենում, երբ գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընդահրապես պարզաբանված չեն կամ պարզաբանված են ոչ լրիվ, կամ դրանք հաստատված չեն անհրաժեշտ ապացույցներով, թեկուզև դատական ակտում առկա է պատճառաբանական մաս: Գործող օրենսգրքի մեջ տեղ գտած այս բացը, մեր կարծիքով, պետք է Զաղ. դատ. օր. 365-րդ հոդվածի 2-րդ մասում նշված մյուս կետերի հետ միասին դատական ակտի բեկանման հիմք հանդիսանա: Այլ խոսքով՝ օրենսդիրը պետք է

1 Стів Коментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (Постатейный). Отв.ред. Г. А. Жилин. Проспект, М., 2014, էջ 14:

այդ հողվածում լրացում կատարի՝ 1965թ. քաղ. դատ. օր. 305-րդ հողվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան:

Գործող ՀՀ քաղ. դատ. օր-ը, ինչպես նշվել է աշխատանքի նախորդ բաժիններում, ունի դատավարական բնույթի ձևական շատ բացեր, իսկ դրա առաջիկա կիրառման պրակտիկան, անշուշտ, կբացահայտի այլ բացեր ևս:

Ամբողջ վերը շարադրվածը մեզ հիմք է տալիս առաջարկել ՀՀ քաղ. դատ. օր. 4-րդ հողվածի 1-ին մասից հանելու «Դատավարական նորմերը օրենքի անալոգիայով չեն կիրառվում» դրույթը և հողվածը լրացնել 1-ին մասով հետևյալ բովանդակությամբ՝ «Երբ քաղաքացիական դատավարական հարաբերության կարգավորման ընթացքում պարզվում է, որ այդ հարաբերությունը կարգավորող նորմը բացակայում է, ապա դատարանը կիրառում է համանման հարաբերություններ կարգավորող դատավարության օրենսդրության նորմեր (օրենքի անալոգիա), իսկ նման նորմերի բացակայության դեպքում գործում է՝ նկատելով Հայաստանի Հանրապետությունում արդարադատության իրականացման սկզբունքներից (իրավունքի անալոգիա)»:

Իրավագիտության մեջ երկարատև ժամանակաշրջանում վիճելի էր նաև քրեական դատավարությունում համանմանության կիրառման հարցը: Այստեղ նույնպես իրավագետները բաժանվում էին երկու հակառակորդ խմբերի: Առաջին խումբը (Ն. Ն. Պոլյանսկի, Պ. Ս. Էլկինդ, Մ. Ս. Ստրոգովիչ, Է. Շ. Կեմուլարիա, Պ. Ֆ. Պաշկեվիչ և այլն) գտնում էր, որ, ի տարբերություն քրեական և վարչական իրավունքների, որտեղ գործում է «Չկա հանցանք և պատիժ, չկա զանցանք և տույժ, առանց դրա մասին օրենքում նշելու», քրեական դատավարությունում ևս հնարավոր է համանմանություն կիրառել, որովհետև այստեղ ևս դատարանը բախվում է տարաբնույթ լայն կենսական իրադրությունների, որոնցում հնարավոր չէ հաշվի առնել այս կամ այն դեպքում ծագող բոլոր նրբություններն ու առանձնահատկությունները¹:

Մենք համաձայն ենք քրեական դատավարությունում համանմանություն կիրառելու թույլատրելիության կողմնակիցների տեսակետներին: Դրա օգտին է խոսում նաև ՀՀ Սահմանադրության դրույթներից բխող և հասարակական գիտակցության մեջ հաստատված ընդհանուր իրավական այն սկզբունքը՝ ըստ որի «Այն, ինչն արգելված չէ օրենքով, թույլատրելի է»: Այդ սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հողվածի 2-րդ մասում, որը սահմանում է. «Քրեական վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել իրենց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից իրենց պաշտպանվելու փաստացի

1 Стів Элькинд П. С. К вопросу об аналогии в уголовном судопроизводстве // Актуальные проблемы закрепления социалитической законности и правопорядка.-Куйбышев, 1982, էջ 84, Бачишвили И. М., Зондзе В. И., Капанадзе Т. Ш. и др. Актуальные проблемы советского права, Тбилиси, 1988, էջ 209, Пашкевич П. Ф. Судебная практика и уголовный процесс // Судебная практика в советской правовой системе.- М., Юридическая литература, 1975, էջ 187:

հնարավորությունը»:

ՀՀ գործող քր. դատ. օր-ը նախնական քննություն իրականացնող մարմիններին, նույնիսկ քրեական գործեր քննող դատարանին չի օժտել տվյալ իրավահարաբերությունը կարգավորող քրեադատավարական նորմի լրիվ կամ մասնակի բացակայության դեպքում համանմանություն կիրառելու այնպիսի իրավունքով, որպիսի բացը վերացնելու անհրաժեշտությունն իր մի շարք որոշումներում ընդգծել է օրինակ՝ ՌԴ Սահմանադրական դատարանը¹:

Պետք է նշել, որ չնայած ՀՀ քրեական դատավարությունում համանմանության կիրառման կամ չկիրառման վերաբերյալ որևէ նորմ չկա՝ այնուամենայնիվ ՀՀ դատարանները երբեմն – երբեմն քրեական գործերով կիրառում են այն: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր. 207-րդ հոդվածին համապատասխան՝ մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ, և նրա հարցաքննությանն իրավունք ունի ներկա գտնվելու նրա օրինական ներկայացուցիչը: Այս դրույթը չի տարածվում դեռևս չհարուցված քրեական գործերով բացառության համար կանչվող անչափահասների նկատմամբ, բայց նշված երկու իրադարձությունների նույնությունը թելադրում է երկրորդ դեպքում ևս հրավիրելու մանկավարժ:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը իրավական բացեր է արձանագրել նաև ՀՀ քր. դատ. օր. 427-րդ հոդվածի 2-րդ մասում, որոնք վերաբերում են վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններից գործը առաջին ատյանի դատարան ուղարկելու ժամկետների բացակայությանը՝ նշելով, որ դրանից է կախված մի շարք պատժամիջոցների հաշվառման ժամկետները²:

Արդարադատության անորակ իրականացումից և իրավապահ մարմինների ինքնագործունեությունից խուսափելու ու քրեական դատավարությունում իրավունքի բացերը հաղթահարելու շահը, մեր կարծիքով, պահանջում է ՀՀ քր. դատ. օրենսգրքի հենց 1-ին հոդվածը լրանցնել 2-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. «2. **Եթե քրեական դատավարական հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով, ապա նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող քրեական դատավարության նորմերը (օրենքի անալոգիա)**»:

Մենք միաժամանակ գտնում ենք, որ իրավունքի համանմանության թույլատրումը քրեական դատավարությունում կարող է հանգեցնել վտանգավոր հետևանքների (դատական կամայականության), ուստի սահմանափակվում ենք միայն «օրենքի անալոգիա» թույլատրելու առաջարկով: Միաժամանակ նկատի ունենալով քրեական դատավարությունում համանմանության ոչ ձիշտ, ոչ տեղին կիրառման վտանգավորության աստիճանը՝ ըստ մեզ, քրեական դատավարությունում օրենքի համանմանություն կա-

1 Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի 1996թ. փետրվարի 2-ի թիվ 4-ն, նույն թվականի նոյեմբերի 28-ի թիվ 19-ն, 1999թ. հուլիսի 2-ի թիվ 20-ն և այլ որոշումները:

2 Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. հունվարի 25-ի ՍԴՌ-933 որոշումը:

րող է կիրառվել միայն որոշակի պայմանների պահպանության դեպքում: Ուստի առաջարկում ենք ՀՀ քր. դատ. օր. առաջին հոդվածը լրացնել նաև 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «3. **Քրեական դատավարությունում օրենքի անալոգիան կիրառվում է, եթե՝**

- **քրեադատավարական հարաբերությունները կարգավորող նորմերի համակարգում առկա է իրավական բաց,**
- **իրավունքի բացը վերաբերում է քրեական դատավարության օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների ոլորտին,**
- **բացի լրացումն իրականացվում է քրեական դատավարության սահմանադրական սկզբունքների պահպանմամբ,**
- **բացի լրացումը չի հանգեցնում քրեական դատավարությանը մասնակցող քաղաքացիների իրավունքների սահմանափակմանը»:**

Վերը նշվածներից բխում է, որ քրեական գործը վարող պաշտոնատար անձինք չեն կարող կատարել գործողություններ և ընդունել որոշումներ, որոնք նախատեսված չեն քրեադատավարական օրենքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում իրավական բացերի բացմաթիվ օրինակներ կան, որոնց անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Այսպես՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումով քննելով ՀՀ քր. դատ. օր. 197-րդ հոդվածի 5 և 6-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, սահմանադրական դատարանը արձանագրել է. «...օրենսգրքի նորմերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ.

- օրենսգիրքը նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու վերաբերյալ քննիչի որոշումը դատախազի կողմից հաստատելու հստակ ժամկետ չի նախատեսում,

- նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու վերաբերյալ քննիչի որոշումը մերժելու իրավական հետևանքներն օրենսգրքով հստակ կանոնակարգված չեն,

- օրենսգրքում նաև հստակ կանոնակարգված չէ սահմանված ժամկետի խախտմամբ նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդության ներկայացման հանգամանքը»¹:

Վերը նշված երկու որոշումներում էլ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ նման իրավական կարգավորումը (բացերի լրացումը) կարող է կատարել միմիայն օրենսդիր մարմինը՝ գործող օրենքում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու միջոցով:

1 Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. հուլիսի 28-ի ՍԳՈ-1225 որոշումը:

Рафик Петросян

*Заведующий юридической кафедрой
Международного университета Евразия,*

Доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

Гарегин Петросян

*Начальник юридического отдела Аппарата Национального Собрания РА,
Советник 1-го класса Государственной службы,
кандидат юридических наук*

ФУНКЦИОНИРОВАНИЕ ИНСТИТУТА АНАЛОГИИ В РАЗЛИЧНЫХ ОТРАСЛЯХ ПРАВА РА.

Настоящая статья посвящена тем отраслям права РА, в которых законодатель разрешает применять аналогию закона и/или права. На основе анализа законодательства и судебной практики, а также сравнительного анализа применения в зарубежных странах института аналогии, разработаны предложения по совершенствованию данного института и по внедрению в гражданское и уголовно-процессуальное право.

Ключевые слова: аналогия, устав, аналогия закона, аналогия права, имущественные права, предпринимательская деятельность, правоприменительные органы, конституционный суд.

Rafik Petrosyan

*Head of the Department of Law at Eurasia International University,
Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA*

Garegin Petrosyan

*Head of the Legal Department of the RA National Assembly Staff,
First Class Advisor of the RA State Service,
Ph.D. in Law*

THE FUNCTIONING OF ANALOGY SYSTEM IN VARIOUS BRANCHES OF RA LAW

The article thoroughly touches upon those branches of RA law where the legislative body allows putting into practice law and/or right analogy. Based on the comparative analysis of analogy applied practice in several branches of foreign law and RA legislative and judicial application, there have been elaborated some suggestions and specific clauses in RA civil and criminal proceedings, hence positing the need of boosting the system, hereof.

Key words: analogy, Code, law analogy, right analogy, property rights, entrepreneurship, law applicable bodies, Constitutional Court.